Մեդիագրագիտությունը, որպես քննադատական մտածողության ձևավորման գործիք պատմության դասաժամերին

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Դասընթացավար՝ Վարսիկ Աղաջանյան
Լոռու մարզ, Ք. Վանաձոր, Վահան Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոց

Դասի թեման՝ Պապ թագավորի քաղաքականությունը

Դասարան 10

Դասի նպատակը

- Զարգացնել IV դարի Արշակունի արքաների գործունեությունը, նրանց օրոք տեղի ունեցած իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու հմտություն:
- Զարգացնել մեդիայի բովանդակությունը քննադատորեն վերլուծելու կարողություն՝ կիրառելով մեդիագրագիտության սկզբունքներն ու գործիքակազմը:
- Զարգացնել բազմատեսանկյուն մոտեցում ցուցաբերելու հմտություն:

Վերջնարդյունքներ

- Վերլուծի Արշակունյաց Հայաստանի նշանավոր գործիչների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:
- Համեմատի և վերլուծի սկզբնաղբյուրները՝ կիրառելով մեդիագրագիտության սկզբունքները:
- Տարբերակի կեղծ, մանիպուլյատիվ տեղեկույթը և ապատեղեկատվությունը:

Կապը ՀՊՉ-ով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ27

Խնդիրներ

- Տարբեր սկզբնաղբյուրներ վերլուծելով և համեմատելով՝ ներկայացնի Արշակ Բ-ի և Պապ թագավորի գործունեությունը,
  ցուցաբերի բազմատեսանկյուն մոտեցում ժամանակի կարևոր իրադարձությունները մեկնաբանելիս
- Մեդիագրագիտության սկզբունքներն
  ու գործիքակազմը կիրառի ապատեղեկատվությունը հավաստի տեղեկությունից տարբերակելու համար:

Միակողմանի տեղեկատվություն

Քայլ 1. Ուսուցիչը աշակերտներին ցուցադրում է նկարը և հարցնում, թե ի՞նչ են տեսնում նկարում: Նկարը կազմված է երեք մասից: Ուսուցիչը նախ ցույց է տալիս 1-ին մասը, ապա 3-րդը, այնուհետև 2-րդ մասը՝ նկարն ամբողջությամբ: Յուրաքանչյուր ցուցադրումից հետո լսում է աշակերտների կարծիքները:

Առաջադրանքը նպատակ ունի աշակերտներին ցույց տալու, որ հաճախ մեզ մատուցվում է միակողմանի տեղեկատվություն: Կարևորում է ինֆորմացիան տարբեր աղբյուրներից համեմատելը՝ ամբողջական պատկերը ճիշտ վերլուծելու համար:

Տե՛ս ամբողջ պատկերը
և մեկնաբանի՛ր

Աշխատանք աղբյուրի հետ



Ստուգի՛ր | Վերլուծի՛ր | Համեմատի՛ր

Քայլ 2. Ուսուցիչը ներկայացնում է, թե ինչպես կարելի է ստուգել, ճշտել, համեմատել ու վերլուծել մեդիայից վերցրած ցանկացած նյութ:

Քայլ 3. Սովորողները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբում ստանում է Արշակ Բ-ի և Պապ թագավորի մասին տարբեր պատմիչներից աղբյուրներ և կատարում վերլուծություն՝ ըստ տրված հարցաշարի.

1.Ի՞նչ տեսակի աղբյուր է ՝ սկզբնաղբյուր, երկրորդային աղբյուր և այլն :

2. Ո՞վ է նյութի հեղինակը:

3.Ի՞նչ դիրք է նա զբաղեցրել (սոցիալական պատկանելություն, պաշտոն , մասնագիտություն, սեռ և այլն):

4.Ո՞րն է նյութը գրելու շարժառիթը:

5.Ո՞ւմ համար է ստեղծվել նյութը:

6.Ի՞նչ հնարքներ են օգտագործված:

7.Ո՞րն է նյութի ուղերձը :

5-րդ դարի պատիչներն ու Պապ թագավորը

Քայլ 4. Ուսուցիչը մի խմբին տալիս է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունից մի հատված, իսկ մյուս խմբերին Լեոյի «Հայոց Պատմություն» աշխատությունից մի հատված և առաջարկում վերլուծել վերը նշված հարցադրումների օգնությամբ:

Երկու հատվածի նյութերն էլ վերաբերում են Պապ թագավորին:

Խմբերն աշխատում են իրենց առաջադրանքների վրա:

Սովորողները ներկայացնում են իրենց ուսումնասիրությունները՝ բացատրելով, թե ինչու են տարբերվում աղբյուրները: Գալիս են այն եզրահանգման, որ նման մոտեցում պետք է ցուցաբերել արդի մեդիադաշտում:

Կասկածի՛ր

Ճշտի՛ր

Լեոն և Փավստոց Բյուզանդը Պապ թագավորի մասին

…այդ պատճառով էլ Պապը հլու և կամակատար Արշակունիներից մեկը չէր դառնում, այլ ընդգրկում էր անկախ և ինքնուրույն քաղաքականություն, որ ընդհարումներ էր առաջացնում կաթողիկոսի հետ, խանգարող, արգելող իշխանություն էր դառնում նրա համար:

Լեո, Հայոց պատմություն, հատոր Ա

Իսկ Պապ թագավորը, երբ դեռ նոր ծնված երեխա էր, նրա անօրեն Փառանձեմ մայրը նրան դևերին նվիրեց, ուստի և նա տղայությունից ի վեր լի էր դևերով:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն

Համեմատի՛ր

Դիտարկի՛ր տարբեր տեսանկյուններից

Անդրադարձ

Քայլ 4. Ելքի քարտ

- Ի՞նչ նոր բան այսօր իմացաք:
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչն էր դժվար:
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:

Տնային հանձնարարություն

- Պատկերացրեք, եթե Պապ թագավորը լիներ մեր օրերում: Սոց ցանցերում ինչ մեկնաբանություններ կգրեին օգտատերերն ու քաղաքական մեկնաբանները նրա գործունեության մասին կամ նրա քաղաքականությունը ինչպես կմեկնաբանեն տարբեր հեռուստաալիքներ:

Օգտագործած գրականություն, հղումներ

Լեո, Հայոց պատմություն, Հատոր Ա

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն

«ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ https://kznakgnahatum.blogspot.com/2021/11/9.html

Media.am

Շնորհակալություն

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/